



ՄԻ ԺԱՆՐԱԿՇԻՌ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋԸ

Այս, լեզուն, լեզուն. լեզուն որ չլի, մարդ ընչի՞ նման կլի,
մեկ ազգի պաճուղը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը:

Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, հայոց նորահաս երիտասարդի, ձեր ա-
նունին մոռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցե՛ք, ձեր
լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ («Վերջ Հայաստանի»)



մերիկայի Հայոց Առաջնորդա-
րանի պաշտոնական հրատա-
րակությամբ «Հայաստանեայց
Նկեղեցի» հանդեսի էջերում

արժարժվեց գաղութահայության համար շա-
փագանց մեծ կարևորություն ներկայացնող
մի ծանրակշիռ հարց, որին, դժբախտաբար,
խմբագրությունն հնարավորություն չունեցավ
իր ժամանակին լսողադատելու, զուտ
տեխնիկական պատճառներով: Մեր խոսքը
վերաբերում է «Հայաստանեայց Նկեղեցի»
հանդեսի 1948 թ. հունիս համարում տպա-
գրված «Հայերենը Ամերիկայի մէջ» խորա-
գիրը կրող խմբագրական հոդվածին: Այս
հոդվածում շոշափված է մի շափագանց
այժմեական ու կարևորագույն խնդիր— հայ
լեզվի խնդիրը ամերիկահայ գաղութում: Մի
խնդիր, որ վերաբերում է ոչ միայն ամերի-
կահայ գաղութին, այլև ներ մյուս հայկա-
կան գաղութներից շատերին, քանի որ ու-
ծացման, ձուլման վտանգը սպառնում է ոչ
թե միայն ամերիկահայ, այլ և հավասարա-
պես նաև մեր մյուս շատ գաղութներին:

«Հայաստանեայց Նկեղեցի»-ի խմբագրու-
թյունը գովելի նախաձեռնություն է հանդես
բերել, հրապարակի վրա դնելով մի շատ
ցավոտ և բառ ամենայնի, լուրջ բնույթի
կարևոր խնդիր: Սակայն, պիտի ասենք, որ
Ամերիկահայոց Առաջնորդարանի պաշտոնա-
կան հանդեսի խմբագրությունը, ցավոք
սրտի, ճիշտ մոռնեցում չի ցուցաբերել իր
կողմից առաջադրված այս կարևոր խնդրի
յուծման նկատմամբ, որի հետևանքով էլ
հանգել է անցանկալի եզրակացությունների:

Նկարագրելով հայ լեզվի ու հայ դպրոց-
ների առնվազնիվ վիճակը ամերիկահայ գա-
ղութում, խմբագրությունը գրում է.—

«Կարևորն այն է, որ ըմբռնենք կացու-
թիւնը և մտքի նոր կեցումաժողով մը դիմա-
գրանք դային»:

Ընթերցողը այս լռողներից հետո սպասում
է, որ խմբագրությունը միջոցներ կառաջար-
կի հայ լեզվի զորացման ու նրա գոյության
հարատևության համար մեր այդ հեռավոր
ու հայաբազմ գաղութներից մեկում: Բայց
հիասթափությունը կատարյալ է լինում, երբ
ընթերցողը հասնում է հոդվածի վերջին, եզ-
րափակիչ նախադասություններին, ուր աս-
ված է.

«Հայ Նկեղեցույ ծիրեն դուրս հայերենի ու-
սուցումը անիմաստ է այս երկրին մէջ. առ
առաւելն ակադեմիական իմաստ մը կրնայ
ունենալ, այն ալ համալսարաններու մէջ,
մասնագէտներու համար»:

Ի վերջոյ լեզու ըստաժող, որ վերաբերու-
թյուն ունի մերն է, ունի իր կեանքը, յե-
ղափոխութիւնը և մահը: Լեզուն յափտեմա-
կան ճշմարտութիւն մը չէ, թէև ի կենդանու-
թեան կրնայ ծառայել իբր անդրուվար յա-
փտեմական ճշմարտութեանց: Այս ճշմար-
տութեանց բուն և միակ աղբիւրը կրօնքն է,
ու մեր պարագային, եթէ հետամուտ ենք
գտնելու այդ աղբիւրը, միայն Հայ Նկեղե-
ցիէն է, որ կրնանք դայն ստանալը:

Նման մոռյալ ու հուսալքող դատողություն-
ների հանգել կարող են միայն ճշմարտ, որոնք
հոռետեսութեան են տրամադրված հայ ժողո-
վրդի ապագայի նկատմամբ, որոնք աչք են
փակում Սովետական ծաղկող Հայրենիքի

գոյության հանդեպ, որոնք այս կամ այն գաղութի հայութիւնը չեն դիտում որպէս հայ ժողովրդի ամբողջականութեան մի մասնիկը, որ պատմական դեպքերի քերումով իր մայր Հայրենիքից խլովելու ու օտար ամբիւրէններում, որոնք չեն մտածում, որ հայ ժողովրդի հողմահայած, օտար հորիզոնների տակ դեգերող այդ թեկնորենքին անհրաժեշտ է կապել իմայր Հայրենիքի հետ, հայրենասիրութեան ոգի ներշնչել, հուսադրել և Հայրենիքի դառնալու անմար տենչը բորբոքելու ու վառ պահելու նրանց սրտերում:

Միանգամայն վտանգավոր ու վնասակար են հայ լեզուն ու հայ դավանանքը միմյանցից անջատ դիտելու, միմյանց հակադրելու, մեկը քերականացնելու, մյուսը գերազանցահատելու, մեկի դերը ժխտելու, մյուսին առաջնութիւն տալու նմանօրինակ փորձերը:

Մեր վերը քերած մեքենայական դժվար չէ կռահել, թե ո՞ր կարող են տանել այս հողավածի մանվածապատ դատողութիւնները այն մասին, որ *«Էնգոն յախտեանական ճշմարտութիւն մը չէ»*, որ *«Էնգոն ըստածր»* *«Եկերպրեկալ իրականութիւն մըն է»*, որ նա *«Շոնի իր կեանքը... և մահը»*: Այս ամենը դուռ է բաց անում հաջորդ անգամ մի բայի և առաջ գնալու և հարց դնելու, որպէսզի հայ եկեղեցում հայ ծեսը, հայ եկեղեցական աւարողութիւնները կատարվեն ոչ թե հայ լեզվով, այլ օտար լեզվով: Իսկ սա տանում է դեպի գաղութահայ եկեղեցու խաղաղայնացումը, նրա օտարացումը, խորքացումը, անջատումը Մայր եկեղեցուց և ի վերջո՝ նրա մահացումն, անէացումը և ձուլումը ինչ որ ազգերից ու լեզուներից վեր ֆրիստոնեական եկեղեցական տիեզերական միութեան մեջ: Արդյո՞ք սա չի՞ հանդիսանում ֆրիստոնեական եկեղեցիների տիեզերական միութեան ստեղծելու գաղափարախոսութեան վնասակար աւտագանքը հայ իրականութեան մեջ, ուղղված Հայ ազգային եկեղեցու անկախութեան ու ինքնուրույնութեան դեմ: Եվ եթե ֆրիստոնեական եկեղեցիների տիեզերական միութեան ջատագովները որոշակի նպատակներ են հետապնդում, որոնք երբեք չեն կարող համատեղվել Հայ եկեղեցու նպատակադրումների հետ, խաչաւ Հայաստանեայց եկեղեցի» հանդեսի խմբագրութիւնը նրանց հետեւելով չի պատկերացնում, թե ինչպիսի վնասակար ուղու վրա է կանգնեցնում գաղութահայ եկեղեցին:

Հայ եկեղեցու ամենամեծ խթանիքը նրա մեջ է կայանում, որ նա, չնայած դարեր տեղը բոլոր տեսակի հալածանքներին, անյուր բռնութիւններին և պատմական անընդհատ պայմաններին, միշտ էլ բարձր է ծածանել իր անկախութեան, ինքնու-

րույնութեան դրոշմը և համարձակ ու վրստան խոսք է բերացել իր ուրույն ուղիով, իսկ այդ ուղին սերտորեն միահիւստած է եղել հայ ժողովրդի բախտի ուղիների հետ: Հայ եկեղեցու համար խորք է եղել խաղաղայնութեան գաղափարը, նա սկզբից ի վեր հանդիսացել է ազգային եկեղեցի և որպէս այդպիսին, իր ժողովրդի ազգապահպանման խոշորագույն ազդակներից մեկն է եղել: Իր հարազատ ժողովրդի ազգապահպանման նախանձախնդիր Հայ եկեղեցին դարեր շարունակ մաքանել է օտար ազդեցութիւնների դեմ, պատվար հանդիսացել նրա ինքնուրույնութեան պահպանմանը և այսօր էլ նա խնդրորեն շարունակում է իր այդ ազգապահպանման նվիրական գործը և ո՛չ ոք իրավունք չունի մագաչափ անգամ շեղելու նրան իր նախընտրած ու դարերի վաղնջականութեամբ նվիրական դարձած ուղուց:

Ձեռք կարծում, որ «Հայաստանեայց եկեղեցի» հանդեսի մեր գրչակիցները միտումնավոր կերպով աշխատած չեն են Հայ եկեղեցին ապագայնացման ուղու վրա կանգնեցնել, թերեւ այդ ոչ ճիշտ դիրքավորումը առաջացել է վնասակար խնդրի լուծութեան: Հայ ծեսը հակաառաջակներին ամփոփելով մատչելի դարձնելու քարի մղումներից դուրս վաճ «Հայաստանեայց եկեղեցի»-ի խմբագրութիւնը հրապարակի վրա է դրել լեզվի խնդիրը, բայց, թերեւ իր կամքին էլ հակառակ, կանգնել է Հայ եկեղեցու ապագայնացման հողի վրա: Համոզված ու հավատացած ենք, որ Ամերիկահայ թեմի գործունեյա, Էռնանդուն և Հայ եկեղեցու, դաբերի վաղնջականութեամբ սրբազործված, ամենդեռի նախանձախնդիր Առաջնորդ Տ. Տիրան Նախկապոստ, իր ազդու միջամտութեամբ, վնասակար թեմում կմտցնի «Հայաստանեայց եկեղեցի» հանդեսի խմբագրութեան աշխատանքներին մեջ:

Չպետք է մոռանալ երբեք, որ Հայ եկեղեցու ինքնուրույնութեանը մեծապէս նպաստել է հայ լեզուն. դեռ ֆրիստոնեական արշալույսին մեր երջանկահիշատակ հայրերը զգալով հայ լեզվի կարևորութիւնը Հայ եկեղեցու ինքնուրույնութեան, անկախութեան համար, ստեղծեցին հայերեն այբուբենը, հայերեն քաղաքական և Աստուածաշունչը և Աստուծո խոսքը եկեղեցիների թեմերից, փոխանակ աւտորենի ու հունարենի, ճնշել սկսեց մեսրոպ-սահակյան անույշ լեզվով: Ահա ինչ է գրում այս մասին Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ը իր «Հայոց եկեղեցի» հոդվածում.

«Հայոց եկեղեցին, որ իր առաքելական ծագմամբ ինքնագոյութիւն էր, դարձավ կա-

տարեկապես ազգային, երբ ներսես Մեծի որդին՝ Սահակ կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոցը հայ տառերը հնարեցին, Ս. Գիրքը քարգամեցին և հետզհետե ստեղծվեցավ ի դարի հայ կյանքի գրականությունը»:

Այդ օրվանից հայ լեզվի և Հայ Եկեղեցու ուղիները միանյութեցին և նրանք համընթաց փայլեցին. հայ լեզուն դարձավ Հայ Եկեղեցու ամուր պատվանդանը, նրա անսասան հենարանը, իսկ Հայ Եկեղեցին էլ հանդիսացավ հայ լեզվի հզոր պաշտպանը, նրա հովանավորը, նրա խաղաղամե խթանողը. հայ վանքերն էին, որ հայ լեզվի զարգացման և մատենագրության ու պատմագրության հիմնադրման օջախները հանդիսացան:

«Հայոց Եկեղեցին,— գրում է մեր վերը հիշված հոգևածու Վեհափառ Հայրապետը,— հոգս է տարել Հայ ժողովրդի ոչ միայն հոգևոր-քաղաքական, այլ և մտավոր-կրթական և Ազգի գոյության պահպանության: Նա հիմք դրեց և զարգացրեց Հայ գրականությունը, գեղարվեստը, գիտությունը և լեզուն...»:

Եվ ահա հայ լեզվի ու Հայ Եկեղեցու այս նվիրական, անփակտելի, դարավոր կապերի դեմ է, որ այսօր ելույթ է ունենում «Հայաստանեայց Եկեղեցի» հանդեսի խմբագրությունը, քերականատեղով հայ լեզվի դերը, մի լեզու, որով դարեր շարունակ հայ բազմատանջ ժողովուրդը իր ջերմեռանդ աղոթքներն է վերառաքել առ Աստված, որի պահպանության, հարատևության համար հայ ժողովուրդը, Հայ Եկեղեցին փանիքս մարտնչել, նահատակվել ու հերոսացել է: Այսպիսով հայ լեզվին երկրորդական կարեւորություն տալը և նրա հակադրումը Հայ Եկեղեցուն բոլորովին հակասում է Հայ Եկեղեցու նվիրական (պատմական հորադիցիա)ներին:

Հայ Եկեղեցու Ազգրենտի Պետր, ալեգարդ Հայրապետը, ըստ արժանվույն գնահատելով հայ լեզվի դերը ազգապահպանման գործում, դեռ իր անդրանիկ Կոնդակում, դիմելով քեմական կուրիոզներին և ազգային-Եկեղեցական վարչություններին, կոչ էր անում «հետամուտ լինել», որպեսզի հայ մարդիկ «գիտենան ու սիրեն իրենց մայրենի լեզուն, հայրենի պատմությունն ու գրականությունը, նաև այն իրենց փառապանծ նախնիքներին, տեսնեն նոցա հերոսական և անձնավեր պայքար ազգային անկախության, ազգի գոյության համար և հանուն ֆրիստունության վեճ գաղափարներին»: Թվում է թե «Հայաստանեայց Եկեղեցի» հանդեսի խմբ-

բագրությունը պարտավոր էր կիրառել Հայրապետական սույն Կոնդակի ցուցումները, սակայն, իրականում տեսնում ենք, որ նա սահմանափակում է հայ լեզվի դերը: «Հայաստանեայց Եկեղեցի»-ի խմբագրությունը «Հայերէնի ուսուցումը» «Հայ Եկեղեցու ծիրէն» ներս հետևյալ կերպ է դնում. «Ամերիկայի մէջ Հայ Եկեղեցին կը ձգտի սորվեցնել անոնց այնքան հայերէն, որ կարենան Հայ պաշտամունքէն սնունդ ստանալ: Այնքան հայերէն, որ անոնց կապը ազգին հետ չկորսի բոլորովին, և կարենան մի քանի պարզ խօսքեր բանաձևել»: Կարծում ենք, որ «մի փանի պարզ խօսքեր բանաձևել» կարողացող հավատացյալը չի կարող «հայ պաշտամունքէն սնունդ ստանալ», և հայ ծեսի մասին աղոթ ու մակերեսային գաղափար կկազմի միայն, որը պատճառ կհանդիսանա աստիճանաբար նրա կտրվելուն Հայ Եկեղեցուց: Որպեսզի ժամանակակից կրթված հավատացյալը կարողանա խորը թափանցել հայ ծեսի էության մեջ, բմբռնել նրա խորունկ նշանակությունը և սիրել ու ջերմեռանդությամբ նվիրվել իր հարազատ Հայ Եկեղեցուն, ապա նա պետք է ոչ թե «մի փանի պարզ խօսքեր բանաձևել» իմանա, այլ, ինչպես Վեհափառ Հայրապետն է ասում, գիտենա ու սիրի «հայրենի պատմությունն ու գրականությունը», նաև աչի իր «փառապանծ նախնիքներին», տեսնի «նոցա հերոսական և անձնավեր պայքարը ազգային անկախության, ազգի գոյության համար և հանուն ֆրիստունական վեճ գաղափարներին»:

Այստեղ դարձյալ ակնհայտ կերպով երևում է Եկեղեցին իր պատմական ուղուց շեղելու, նրան ապագային բնույթ տալու, ծեսի շրջանակներում սահմանափակելու տենդենցը:

Հայ լայնախոն, ազգային Եկեղեցուն խորը է եղել կրոնական սահմանափակվածությունը. նա ապրել ու տառապել է իր հարազատ ժողովրդի խոհերով ու ցավերով. նա պայքարել է նրա ինֆեուրությունը ու անկախության համար, իր ողջ ուժերը ի սպաս դնելով մայրենի լեզվի, գրականության, մշակույթի զարգացման ու բարգավաճման գործին: Այսօր էլ Հայ Եկեղեցին, հավատարիմ պատմական իր այդ դերին, շարունակում է ընթանալ ազգապահպանման նվիրական ուղիով: Նա ողջունել ու ողջունում է ամեն մի փայլ, որ նպաստում է հայ ժողովրդի ազգապահպանման գործին: Նա նույնիսկ մոռացության չի մատնում այլադավան հայազուններին, որոնք Հայ Ե-

կեղեցու ծիրից դուրս գտնվելով հանդերձ, կապված են մնացել հայ ժողովրդին մայրենի լեզվով, ազգային մշակույթով ու ավանդույթներով: Ահա ինչ է գրում այս մասին թե՛րմ հայրենասեր Վեհափառ Հայրապետը իր 1948 թ. Ամանորյա ողբույնի Կոնդակում:

«Մխիթարական էր և ուրախալի Մեզ տեսնել, որ Հայաստանյայց Ազգային եկեղեցու զավակներին հետ միաշունչ ու միասիրտ մեր նվիրական Ազգային Դատի ու ներգաղթի հաղթանակի համար անկեղծորեն խղիւստեցին և պայքարեցին նաև աշխարհական հայագույնները: Առանձնապես հիշատակույթան և գովասանքի է արժանի ավետարանական ազգայինների, կրոնապետների և հոգևոր հովիվների գործոն մասնակցությունը Համաշխարհային Հայկական Կոնգրեսի, Հայրենադարձի և ազգային այլ ձեռնարկությունների խղիւստանքներին: Սիրո ողբույն մեր հոգևոր եղբայրներին: Սրտառույ է նաև լատինադավան ազգայինների գործակցությունը համազգային խնդիրների արդարադատ լուծման համար, հակառակ նոցա կրոնական պետերի դավադիր հորդորներին»:

Որ հայ գաղութներից շատերը կանգնած են ուժացման, ձուլման ուղու վրա, այդ անվիճելի է, բայց որ այդ անխուսափելի շարիքի դեմ պայքարել և այն, եթե ոչ վերացնել, գեթ մեղմացնել ու հայ գաղութների կյանքը շատ ու շատ երկարաձգել կարելի է, այդ ևս անվիճելի է: Վտանգի հանդեպ վրահատությունը, հոռետեսությունը, հուսալքումը, երկշունչությունը գործին միայն վնաս բերել կարող են և ընդհակառակը, հոգու արիությունը, լավատեսությունը, շարիքի դեմ մաքառելու անձնուրաց պատրաստակամությունը, վառ ապագայի ակնկալության փրկարար հույսը կարող են նոր եռանդ ու նոր կորով ներշնչել ազգապանդաման նախանձախնդիր անձանց, ազգային շունչ, ազգային ոգի ներարկել խորքացման, օտարացման, ձուլման ուղու վրա կանգնած գաղութահայ մասսաներին: Բաց ծովում նավարկելույթան ենթարկվածներից նա է փրկվում, ում հոգում երբեք չի մարում փրկության հույսը, վտանգը դիմագրավելու անսահման հավատը, ով պրկվում է իր ջրառակները, պայքարի մարտահրավեր կարողավ իր կյանքին սպառնացող տարրերին, իսկ ում հոգում մարում է հույսը և ով

երկնչում է իր շուրջը ծառացող գոռալիքների մահաբեր շաշունից, նա մաքառել ու փրկարար ափին հասնել անգոր է լինում և կուլ է գնում իր շուրջը փոքորկաղ ալիքների ծոցում:

Ձևայած մեծ է աշխատեման, ազգային պիմագրկության, ձուլման վտանգը և դժվարին նրա դեմ պայքարելը, սակայն համառ ու տևական պայքարը կարող է հաղթանակով պսակվել, եթե այդ պայքարը խաբսխված լինի ամուր հիմքերի վրա, եթե նա հագնեցված լինի վեհ գաղափարով: Արդ ո՞րն է այն ամուր հիմքը և ո՞րը այն վեհ գաղափարը, որի վրա առանց վարանելու հենվել, որի դրոշի տակ ծավալել կարող են իրենց պայքարը ընդդեմ ապագայահացման ու օտարացման գաղութահայ ազգային հաստատությունները, կազմակերպությունները և հասարակական գործիչները:

Հունական դիցաբանությունից հայտնի է, թե ինչպես Պոսեյդոնի ու Գեսի որդին, լեգենդար Անթեյը, մենամարտի մեջ մտնելով ամեն մի օտարերկրացու հետ, միշտ պարտության էր մատնում նրան, որովհետև մենամարտի պահին ամեն անգամ իր մայր երկրի հետ շփվելով նոր ուժ էր առնում երանից: Անթեյին պարտության մատնեց միայն Հերակլը, որը երկրից կտրելով, օդի մեջ բաժնացրեց և այլևս հնաժամություն չտալով երկրի հետ շփվելու, ախպիսով ուժագուրկ արեց ու խեղդեց նրան:

Գաղութահայ ազգային հաստատություններին, կազմակերպություններին ու հասարակական գործիչներին, իրենց մղած պայքարում, նույնպես հաղթանակ կարող է ապահովել միայն ու միայն նրանց սերտ կապվածությունը մայր հայրենիքի հետ, այն Հայրենիքի, որ այսօր հայ ժողովուրդը կոռում, կոփում է իր երջանիկ կյանքը, կերտում իր լուսաշող ապագան: Սովետական Հայաստանի գոյության փաստը ինքնին ամենամեծ գրավականն է օտարացման, ձուլման դեմ մղվող պայքարի հաջողության: Իսկ այն վեհ գաղափարը, որով տոգորված պետք է լինի այդ պայքարը, հանդիսանում է հայրենասիրությունը: Գաղութահայ ազգային հաստատությունները, կազմակերպությունները, հասարակական գործիչները պարտավոր են հայրենիքի սերը վառ ու անմար պահել օտար հորիզոնների տակ ժամանակավոր ապաստան գտած մեր հա-

բազաու եղբայրների ու Բույրճի հայրենաբազաու սրտերում, բարբաբի նրանց հոգու ընդերքում անքննված հայրենասիրության կայծերը, մեծ հրդեհի վերածել ու այրել նրանց սրտերը հայրենասիրության բարբ կրակով: Այս ամենը հնարավոր է անել միայն սերտացնելով գաղութահայության կապերը մայր Հայրենիքի հետ, հաղորդակից դարձնելով նրան մայրենի լեզվին, հայրենի նվիրական ավանդություններին, ազգային դարավոր պատմությանը, անցյալի ու ներկայի նոխ ու բազմազան գրականությանը, շողորդուն արվեստին: Անա այս հանապարհով միայն կարելի է կանխել, մեղմել խորացման, ձուլման վտանգը, այլապես մայր հայրենիքից, հայ մշակույթից կտրված, մեկուսացած, իր պատյանի մեջ ամփոփված հայ գաղութներին սպասում է Անքնի վիճակը, շրջապատի գրոհից խեղդաման լինելու:

Միայն Հայրենիքը կարող է նոր ուժ, եռանդ, բափ հաղորդել մեր գաղութներին: Հայրենիքից կտրված գաղութները վաղ քե ուղ դատապարտված են ձուլման ու անէացման:

Անա քե ինչպիսի գեղեցիկ, պատկերավոր ու հոգեզմայլ կերպով է տալիս Հայրենիքի հետ կապված լինելու անհրաժեշտության գաղափարը մեծ հայրենասեր Տ. Գարեգին Կաթողիկոսը.

«Մեր հայ ժողովուրդը մի գեղեցիկ խոսք ունի— պատկերալից և իմաստալից մի խոսք. «Տունը հիմամբ է տուն, ծառը արմատով է ծառ»: Մեր հայ ժողովրդի տան հիմքը, մեր ժողովրդի կենդանի ծառի արմատը, մեր մայր Հայրենիքն է:

Մեզ համար թանկ է մեր հայրենի երկիրը ավանդությունների հետ կապված: Մեր սրտերն ու հոգին բարձրացնում է նա դեպի վսեմը, ինչպես մեր հայրենի երկրի կենտրոնում բարձրացած Արարատը:

Հայրենիքում ստեղծվել է մի վիճակ, որ մեր տաղանդը, մեր ազգային հանճարը կարող է ստեղծագործել մեր երկրի մեջ, կապվելով գաղութների ողջ հայության հետ:

Արմատով է ծառը կենդանի, տունը հիմամբ է տուն: Հիմա մեր հիմքը հաստատուն է: Աստուծով ունենք Սովետական Հայաստանը: Պետք է մեր սրտի, մեր

էությունը բոլոր սիրով սիրենք այդ փոքրիկ Հայաստանը:

Մեր հորդուն է լինել Բաբ, հոգով, ձրգտումներով, իդեալներով ու գաղափարներով և աչքը ուղղած մեր Հայրենիքին:

Դուք գիտեք, որ արևածաղիկը իր երեսը միշտ դարձնում է դեպի արևը. մենք էլ մեր աչքերը ուղղել ենք դեպի մեր կենդանության արևը, որ մեր Հայաստանն է թանկագինը:

Սակայն ի՞նչպես անել, որ գաղութահայությունը արևածաղիկի նման երեսով միշտ դարձած լինի դեպի իր մայր Հայրենիքը, որ նրա կապերը սերտանան մայր Հայրենիքի հետ:

Հայ Եկեղեցին, իր դարավոր պատմության ընթացքում, միշտ էլ փայլել է իր անսահման հայրենասիրությամբ, իր անհուն նվիրվածությամբ Հայրենիքին: Հայ Եկեղեցու այդ հայրենասիրությունը, նվիրվածությունը իր Հայրենիքին, նրան հարազատ ու սիրելի է դարձրել իր ժողովրդին և հայ ժողովուրդը, իր դարավոր պատմության ընթացքում, վստան կերպով նրան է ապավինել, նրա շուրջը համախմբվել ու նրա առաջնորդությամբ մաքառել, մարտնչել ազգապահպանման համար:

Արտավազ Արքեպիսկոպոս Սյունյեյանը, իր «Արտասահմանի մեջ Հայ Եկեղեցին Հայաստանի հոգևոր կայսրությունն է» հոդվածում, իրավացի կերպով նշում է, քե «երբ երբեմնի հայ պետական կյանքը դադրեցավ գոյություն ունենալ, Հայ Եկեղեցին փոխարինեց գայն և դարձավ հայ ժողովրդի ամենն հարազատ ու ամենն հավատարիմ խաբիսը, որուն ամբողջ կառնեցավ հայ ժողովուրդը մեր պատմական հողերուն վրա, քե հայրենիքն դուրս, մոտիկ կամ հեռավոր արտասահմանի գաղթավայրերուն մեջ»:

Ապա անդրադառնալով Հայ Եկեղեցու դերին արտասահմանում, նա շարունակում է. — «Վասնզի հայրենիքի գաղափարը, ազգը ապագա իրականությանը հանդես միշտ կենդանի ու հավատավոր պանելու հավիտենական իդը Հայ Եկեղեցին կրցավ անշեղ պանել ու իր փայտաշեն մատուները նույնիսկ բավական եղան իրենց հովանիին տակ ամփոփելու Հայրենիքի ազատության և անոր վերելին ցանկացող հուսակտուր գաղութները:

Հայ Եկեղեցին ամեն տեղ, մինչև հնաավոր Խարպին ու Սուրաբայա, կամ Քայիֆորեի

կամ Արժանքին, դարձավ Հայրենիքի հոգևոր ղեկավարությունը կամ հյուպատոսարանը, ուր գաղթական հայ ժողովուրդը ոչ միայն աղոթեց, այլ և անոր հովանիին տակ միայն պաշտպանություն ու հոգևոր և մշակութային ազատություն գտավ...

Այն ձևով, որ գաղթային պետական կայսրություններ, իրենց նույնիսկ հեռավոր գաղթավայրերում մեջ, իրենց ազգային հատկանիշը, իր բոլոր ստորեզեղիներով՝ լեզու, արվեստ, մշակույթ և այլն, կենդանի պահել կշահան, նույնը բնավ, միշտ իր հոգևոր իմաստով, Հայ Եկեղեցին, առանց որում երբ ոչ հիմնովին անհետացած, գեթ իր նվազման հասած պիտի ըլլա՝ արտասանմանի հայությունը:

Արձանագրելով այս նշմարացի իրողությունը, այսօր էլ մենք միանգամայն վստահ ու լիանույս ենք, որ Հայ Եկեղեցին արտասանմանում կշարունակի պատմական իր այդ մեծ առաքելությունը, բարձր ծածանելով հայ ժողովրդի կողմից նրան վստահված ազգապանդանման փառապսակ դրոշմը:

Հայ Եկեղեցին արտասանմանում, որպես «հոգևոր ղեկավարություն», պետք է իր շուրջը համախմբի Սովետական Հայաստանի բարեկամ գաղութահայ ազգային բոլոր կազմակերպություններին ու հասարակական գործիչներին, որանց գործունե աջակցությամբ նպաստելով գաղութահայությանն ու մայր Հայրենիքի կապերի ամրապնդմանը: Արտասանմանում Հայ Եկեղեցին նախկին եռանդով պետք է շարունակի հովանավորել գաղութահայ դպրոցները, նպաստել նրանց բարգավաճմանը ու հայ մանուկների հայացի դաստիարակությանը: Դրա հետ զուգընթաց Հայ Եկեղեցին Հայաստանի բարեկամ ազգային կազմակերպություններին, հասարակական գործիչներին հետ համատեղ պետք է ձեռնարկի կուլտուրական այնպիսի նոր օջախների հիմնադրմանը, որոնք նրա պատկերով գաղութահայության կապերի ամրապնդմանը մայր Հայրենիքի հետ, միաժամանակ հնարավորություններ կստեղծեն գաղութահայության համար ավելի հաճախակի հանդիպելու, շփման մեջ գտնվելու միմյանց հետ: Եկեղեցին հայրենի բուրմունքը հիշեցնող այն վայրն է, ուր գաղութահայը հնարավորություն է ունենում հանդիպելու իր ազգակից եղբայրներին ու քույրերին,

հաղորդակից լինելու հայրենի նվիրական ավանդություններին, հոգևոր սխալների երաժշտությամբ, եկեղեցու բեմից մայրենի հոգեզմայլ բարբառով հնչող սփոփիչ բարոհներին: Սակայն գաղութահայերի փոխադարձ շփումն ուժեղացնելու, նրանց հայրենի շնչով ապրեցնելու համար կարիք է զգացվում եկեղեցուն կից, դպրոցից զատ, ունենալ հայրենի բուրմունքը հիշեցնող նաև այլ վայրեր: Այդպիսի վայրեր կարող են հանդիսանալ «Հայ մշակույթի տները»: Խելացիորեն կազմակերպված և հմուտ ղեկավարությամբ օժտած «Հայ մշակույթի տները», Հայ Եկեղեցու հետ միասին, կհանդիսանան գաղութահայության ազգապանդանման այն հզոր միջնաբերդը, որին զարեկելով օտար ազդեցությունների ամենակույ արիքները, ուժաքափ ետ կընկրկեն:

«Հայ մշակույթի տներին» կից կարելի է կազմակերպել բանգարան՝ ուր հնարավոր կլինի ի մի հավաքել տվյալ գաղութում ցրված և հայ մշակույթի, պատմության, գրականության կամ տվյալ գաղութի պատմության հետ առնչություն ունեցող արժեքները, փրկելով դրանք անխուսափելի կորստից, նոյն գրադարան-ընթերցարան՝ առավելություն տալով մայրենի գրականությանը, հայ մամուլին և մեր Հայրենիքի պատմությանն ու մշակույթին վերաբերող օտար հրատարակություններին, մայրենի լեզվի ուսուցման, պատմության, գրականության, արվեստի ուսումնասիրման խրմբակներ, որտեղ ընդգրկված լինի հատկապես գաղութահայ երիտասարդությունը, լեկտորիում, ուր սխտեմատիկորեն հանրամատչելի գեկուցումներ պիտի տրվեն հայ լեզվի, պատմության, գրականության, արվեստի, Սովետական Հայաստանի կուլտուր-տնտեսական շինարարության վերաբերյալ, սեր արժարժեքով ունկնդիրներին մեջ Հայրենիքի և նրա անցյալի ու ներկայի բարձրարժեք մշակույթի նկատմամբ: Համախափ կարելի է կազմակերպել գրական-երաժշտական երեկոներ, հայրենի շարժապատկերների դիտում, ցուցահանդեսներ, հայրենի ռադիոհաղորդումների ունկնդրում և այլն: Այստեղ կարելի է կազմակերպել նաև գաղութահայերի, իրենց ընտանիքներով հանդերձ, խելացի ազատ ժամանցը: «Հայ

մշակույթի տները» իրենց շուրջը պիտի համախմբեն նաև շնորհավի, փայլուն ապագա խոստացող հայ տաղանդներին, ամեն կերպ նպաստելով նրանց կատարելագործմանը, միաժամանակ շնոհանալով նրանց աժուր կապել հայ մշակույթի հետ: Այս բոլորի արդյունքն այն կլինի, որ գաղութահայությունը կհամախմբվի իր եկեղեցու, իր մշակույթի տան շուրջը, հնարավորություն կստանա հանախակի գտնվելու հայկական մթնոլորտում և զերծ մնալու օտարացնող ազդեցություններից. նրա ականջին ավելի շատ կհնչի հայ խոսքը, հայ երգը, նա իրեն ավելի հպարտ ու բնավարված կզգա իր հարազատ ժողովրդի մարդկության պատմության ու մշակույթի գանձարանում ներդրած ու ներգրվող մեծ ավանդով: «Հայ մշակույթի տները» կարող են նաև հայանրպատ շարժում առաջացնել օտար շրջանակներում, օտարներին ծանոթացնելով հայ ժողովրդի անցյալի ու ներկայի պատմության, գրականության, արվեստի, Սովետական Հայրենիքի կուլտուր-տնտեսական նվաճումների հետ և այլն:

Հետևաբար անհրաժեշտ է եկեղեցու և գաղութահայ հայաստանյան կազմակերպությունների համատեղ ջանքերով, բոլոր այն վայրերում, որտեղ սովորաբար հայություն կա, կազմակերպել «Հայ մշակույթի տներ», երբ այդպիսիք դեռ կազմակերպված չեն.

իսկ այնտեղ, որտեղ դրանք արդեն գոյություն ունեն, անհրաժեշտ է նոր բառի հաղորդել նրանց զարծուներությանը: Հայ եկեղեցին ու «Հայ մշակույթի տները» կհանդիսանան այն օղակները, որոնցով գաղութահայությունը սերտ կկապվի Մայր Աթոռի ու հարազատ Հայրենիքի հետ:

Հայ տաղանդավոր ու ստեղծագործ ժողովուրդը իրավունք ունի իրեն հպարտ զգալու օտարների առաջ ու իր լեզուն ամուր պահելու, փանի որ նա թե՛ իր շանցյալի և թե՛ ներկայի մշակույթով ոչնչով հետ չի մնում ժամանակակից ֆաղափալիքը ազգերից, և նրա տաղանդավոր զավակների անունները հայտնի են հանուրին: Ուրեմն բող բարձր ու խոթյալ հնչի հայ լեզուն ամենուրեք — Սևանի գեղածիծաղ ափերից մինչև Միջերկրականի ու Խաղաղականի ափերը, Արաֆսի ու Հրազդանի ափերից մինչև հեռավոր Նեղոսի, Գանգեսի, Ամազոնի ու Միսիսիպիի ափերը, Արարատի ու Արագածի փեշերից մինչև Ալպերի ու Անդերի ստորոտները:

Թող գաղութահայության ականջին պատգամի պես հնչի միշտ մեծ հայրենասեր անմահ Աբովյանի սրտաբուխ կոչը.

«Ձե՛զ եմ առում, ձե՛զ, հայոց նորահառ երիտասարդ, ձեր անունին մեռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դալիմ բռնեցե՛ք»:

